

ԱՆԳԼԵՐԵՆ ՑՈՒՑԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔՈՒՄ

Հայտնի է, որ բառերի իմաստաբերականական դասակարգման սկզբունքներից մեկը նշանակման միջոցի և լեզվում առարկայի պատկերման միջոցների միջև հարաբերություններն են, որոնց շնորհիվ բոլոր լիմաստ բառերը ստորաբաժանվում են անվանողական և ցուցային բառերի:

Ի տարբերություն անվանողական բառերի, որոնք նշում են առարկաներ, երևույթներ, տարբեր հասկացություններ, ցուցային բառերի հիմնական գործառույթը խոսքի իրադրության մատնանշումն է: Ցուցային բառերի մասին խոսելիս առաջին հերթին հարկ է նշել դերանունները, որոնք լեզվում հաճախ են հանդես գալիս ցուցայնության գործառույթով: Ը. Բալլի առկայացման տեսության համաձայն դերանունները առկայացնողներ են, որոնց գործառույթը լեզվական միավորները խոսքային միավորներով արտահայտելն է, այսինքն՝ վերացական հասկացությունները կոնկրետ հասկացություններով արտահայտելը (1, 5): Այսպիսով դերանունները չեն նշում առարկաներ, հատկանիշներ, երևույթներ, քանակական հարաբերություններ, այլ ընդհանրել մատնանշում են դրանք՝ ընդհանրացնելով տարբեր հասկացություններ:

Ցուցային բառերը արտացոլում են խոսքային իրադրությունը, որը ենթադրում է խոսող, խոսակից, խոսքի տեղ, ժամանակ, ինչպես նաև տվյալ խոսքային գործողության նույնականությունը/ոչ նույնականությունը մեկ այլ խոսքային գործողությանը (1, 6):

Խոսքային իրադրության փոփոխության դեպքում փոխվում են ինչպես խոսքային գործողության մասնակիցները, այնպես էլ խոսքի ժամանակը և տեղը: Այս փոփոխությունները իրենց պարտադիր արտահայտությունն են գտնում ուղիղ խոսքը անուղղակի խոսքի վերածելիս (5, 45):

Տվյալ հոդվածի նպատակն է ուսումնասիրել ցուցային բառերի որոշ առանձնահատկություններ և վերլուծել դրանց իմաստային փոփոխությունները տարբեր խոսքային իրադրություններում, մասնավորապես՝ անուղղակի խոսքում: Լեզվաբանները անվանողական և ցուցային բառերի գործառույթների մասին խոսելիս նշում են, որ անվանողական բառերը առարկան առանձնացնում են այն հատկանիշներով, որոնք պայմանավորված չեն խոսքային իրադրությամբ, իսկ ցուցային բառերը տալիս են առարկայի ժամանակավոր բնութագրությունը, այսինքն նշում են առարկայի այնպիսի հատկանիշներ, որոնք բնորոշ չեն նրան ընդհանրապես, այլ պայմանավորված են իրադրության այլ առարկաների հետ հարաբերությամբ: Այդ իսկ պատճառով ցուցական բառերը կարելի է նաև անվանել իրադրական (6, 200):

«Ցուցայնություն» անվանումը սկիզբ է առել հունարեն «ցույց տալ» բայից և ընդգրկում է երկու տարր՝ ցուցային նշանը և ռեֆերենտը, այսինքն իրակա-

նության այն առարկան կամ հասկացությունը, որին վերաբերում է ցուցային նշանը: Ցուցայնությունը բնութագրում է լեզվի կողմնորոշիչ հատկանիշները՝ խոսքի ժամանակը և տեղը, որոնք լեզվական իրադրության գլխավոր բնորոշիչներն են, և դրանց վրա են հիմնված դերանունների երկու գլխավոր գործառույթները՝ ցուցայնությունը և անաֆորան: (4, 5) Ցուցայնությունը ենթադրում է լեզվական իրադրության այնպիսի բաղադրիչների մատնանշումը, ինչպիսիք են խոսողը, խոսակիցը, ժամանակը, վայրը, ինչպես նաև այն ամենը, ինչ ուղղակիորեն վերաբերում է խոսքային իրադրությանը (անձերը և առարկաները, որոնք ներկա են տվյալ պահին, խոսքային իրադրությանը վերաբերող ժամանակային հարաբերությունները և այլն), մինչդեռ անաֆորան ենթադրում է կոնտեքստի բազադրիչների մատնանշումը:

1-ին և 2-րդ դեմքի անձնական դերանունները, որոնք ցույց են տալիս խոսքի անմիջական մասնակիցերին, որպես կանոն, հանդես են գալիս ցուցայնության գործառույթով, իսկ 3-րդ դեմքի դերանունները հիմնականում գործածվում են անաֆորիկ գործառույթով. բանի որ դրանց ռեֆերենտը պայմանավորված է համատեքստով:

How are you? (ցուցայնություն)

A man entered the room. He took off his hat. (անաֆորա)

Առաջին օրինակում *you* դերանվան ռեֆերենտը խոսակիցն է՝ խոսքային իրադրության մասնակիցը, և այն հանդես է եկել ցուցայնության գործառույթով: Երկրորդում *he* դերանվան իմաստը որոշվում է լեզվական համատեքստով (*a man – he*), ուստի այս դեպքում այն կատարում է անաֆորիկ գործառույթ:

Իմաստաբանորեն անգլերենի ցուցային բառերն ընդունված է դասակարգել հետևյալ կերպ.

1. Անձնական ցուցայնության բառեր. սրանք անձնական, ստացական և անրադարձ դերանուններն են (*I, you, my, your, myself*, և այլն)
2. Տարածական ցուցայնության բառեր (*here* և *there* մակբայները)
3. Ժամանակային ցուցականության բառեր. սրանք հիմնականում ժամանակի մակբայներն են (*today, yesterday, tomorrow, now, then*, և այլն)

Որոշ լեզվաբաններ էլ ցուցայնության գաղափարը դիտարկում են ավելի լայն իմաստով. օրինակ, Ի. Ա. Ստերնինը ագլերենի ցուցային բառերի շարքին է դասում նաև *back, front, opposite, behind, above, across, far* մակբայները (6, 200):

Սակայն գլխավորը, որ բնութագրում է ցուցային բառերը, մնում է անփոփոխ. այն է՝ ցուցային բառով արտահայտված առարկայի հատկանիշների հարաբերությունը այլ առարկաների հետ, ինչը ենթադրում է զգայապես ընկալվող իրադրություն (5, 201): Խոսքում առանձնացվում է երկու տիպի իրադրություն՝ անմիջական զգայական, որում գտնվում են խոսքի մասնակիցները՝ խոսողը և խոսակիցը, և վերապատկերված զգայական իրադրություն, որը հաղորդվում է խոսքի մասնակիցներից մեկի կողմից: Իրադրության այս երկու տիպերն առավել ցայտուն կերպով հանդես են գալիս ուղիղ և անուղղակի խոսքում:

Ուղիղ խոսքը անուղղակի խոսքի փոխակերպելիս, որպես կանոն, ուշադրությունը կենտրոնացվում է ժամանակների համաձայնեցման վրա, այսինքն՝ երկրորդական նախադասության ստորոգյալի ժամանակը համաձայնեցվում է գլխավոր նախադասության ստորոգյալի ժամանակի հետ (2, 338): Սա, կարելի է ասել, խնդրի քերականական կողմն է, ըստ որում այն հատուկ է ոչ բոլոր լեզուներին (օրինակ, հայերենում, ռուսերենում ժամանակների համաձայնեցման կանոնը չի գործում): Անուղղակի խոսքում կատարվող փոփոխությունների իմաստաբանական կողմը պակաս կարևոր չէ, քան քերականականը: Ըստ որում՝ այն լեզվական ընդհանրույթ է, քանի որ իմաստաբանական, տրամաբանական կարգերը դիտվում են բոլոր լեզուներում: Անուղղակի խոսքում որոշակի փոփոխությունների են ենթարկվում ցուցային բառերը, քանի որ, ինչպես վերը նշվել է, նրանց իմաստը պայմանավորվում է որոշակի իրադրությամբ և խոսքային ակտի մասնակիցներով (*here – there, this – that, now – then, today – that day, tomorrow – the next day, yesterday – the day before*): Նշված փոփոխությունների համար առաջնայինը կողմնորոշման կենտրոնն է, որը ցուցային բառերի տարբեր խմբերի համար տարբեր է: Այսպես, տարածական ցուցանության բառերի դեպքում (*here, there*) կողմնորոշման կենտրոնը խոսողն է. *here* – այնտեղ, որտեղ տվյալ պահին գտնվում է խոսողը, *there* – այնտեղ, որտեղ տվյալ պահին նա չի գտնվում:

I work here.

He said he worked here.

Առաջին օրինակում *here* բառը հարաբերակցվում է *S1*-ի (խոսողի) հետ. երկրորդում՝ *here*-ը հարաբերակցվում է *S2*-ի (ուրիշի անուղղակի խոսքը հաղորդողի) հետ և ոչ թե *S1*-ի, քանի որ փոխվում է խոսքային իրադրությունը, ինչպես նաև մասնակիցները: Այն, որ *here* մակբայն անուղղակի խոսքում մնում է անփոփոխ, վկայում է, որ *S2*-ը և *S1*-ը գտնվում են միևնույն տարածական իրադրությունում: Եթե *S1*-ը և *S2*-ը գտնվում են տարբեր տարածական իրադրություններում, ապա անուղղակի խոսքը կունենա հետևյալ տեսքը.

He said he worked there.

Ժամանակային ցուցանության բառերի համար կողմնորոշման կենտրոնը խոսքի պահն է: Եթե *S1*-ի և *S2*-ի ժամանակները համընկնում են, ապա անուղղակի խոսքում գործածվում է նույն ցուցային բառը, ինչ ուղիղ խոսքում:

Dr. Manson said; "He felt ill yesterday".

Dr. Manson said you felt ill yesterday.

Բերված օրինակներում ուղիղ և անուղղակի խոսքի հաղորդման ժամանակները համընկնում են, ուստի երկուսի դեպքում էլ գործածվում է նույն ցուցային բառը (*yesterday*):

Եթե S1-ը և S2-ը չեն համընկնում ժամանակային առումով, ապա տեղի է ունենում ժամանակային տեղաշարժ:

He said to me; " Speak to him tomorrow morning".

He asked me to speak to you this morning.

Բերված օրինակում անուղղակի խոսքը հաղորդվել է նշված խոսակցության հաջորդ օրը, հետևաբար համապատասխան ցուցային բառերը փոխվում են (*tomorrow morning – this morning*):

Անուղղակի խոսքում կատարվող փոփոխությունները ուսումնասիրելիս պետք է նաև ուշադրություն դարձնել անձնական դերանունների գործածությանը: Ուղիղ խոսքում դիտարկում ենք անձնական դերանունների (հիմնականում 1–ին և 2–րդ դեմքերի) ցուցային գործառույթը, քանի որ դրանք ցույց են տալիս խոսքի անմիջական մասնակիցներին: Անուղղակի խոսքում 3–րդ դեմքի անձնական դերանունը հանդես է գալիս անաֆորիկ գործառույթով, քանի որ դրա իմաստը պայմանավորված է էնգվական համատեքստով:

I'm angry with you.

Mary told Nick that she was angry with him.

(*Mary – she; Nick – he*)

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել. որ

- Ցուցային բառերը արտահայտում են խոսքային իրադրությունը;
- Ցուցային բառերի ընտրությունը պայմանավորված է խոսքի ժամանակա-տարածական իրադրություններով, որոնց մեջ գտնվում են խոսքային ակտի մասնակիցները;
- Ցուցային բառերի՝ քերականության մեջ ընդունված փոփոխություններն անուղղակի խոսքում միշտ չէ, որ արդարացված են. ժամանակա-տարածական իրադրությունների փոփոխության դեպքում փոխվում են նաև ցուցային բառերը (*here, this, today*, և այլն, փոխվում են *there, that, that day* և այլն), իսկ եթե ուղիղ և անուղղակի խոսքերը հաղորդվում են նույն ժամանակա-տարածական իրադրություններում, ապա համապատասխան ցուցային բառերը մնում են անփոփոխ:
- Տարածական ցուցայնության դեպքում կատարվող փոփոխությունների համար կողմնորոշման կենտրոնը խոսողն է, իսկ ժամանակային ցուցայնության բառերի դեպքում՝ խոսքի պահը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Вольф Е. М., Грамматика и семантика местоимений, М., 1974.
2. Есперсен О., Философия грамматики, М., 1958.
3. Майтинская К. Е., Местоимения в языках разных систем, М., 1969.
4. Петрова О. В., Местоимения в системе Функционально-семантических классов слов, Воронеж, 1989.
5. Стернин И. А., К понятию дейксиса, В. Сб. Историко-типологические исследования, Москва. 1972.
6. Մխիթարյան Ե. Ա., Ցուցական բառերը ուղղակի և անուղղակի խոսքում, Երևան, 1981:

Т. ГАЛОЯН

ОСОБЕННОСТИ УПОТРЕБЛЕНИЯ АНГЛИЙСКИХ ДЕЙКТИЧЕСКИХ СЛОВ В КОСВЕННОЙ РЕЧИ

Выбор дейктических слов в косвенной речи обусловлен теми временно-пространственными ситуациями, в которых находятся S1 и S2. Для изменений в косвенной речи главным является центр координации. Центром временной координации является момент речи, центром пространственной координации — говорящий.

T. GALOYAN

PECULIARITIES OF THE USE OF ENGLISH DEICTIC WORDS IN THE INDIRECT SPEECH

The choice of deictic words in the indirect speech depends on the time — distal situations in which S1 and S2 are. The center of coordination is an essential factor for the changes in the indirect speech. The moment of speech is the center of time coordination, whereas the speaker is the center of distal coordination.